

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ «ՀԱՆԳՍՏՅԱՆ» ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 21-ին Մայր տաճարում կատարվեց հանդիսավոր «Հանգստյան» ժամերգություն, որին ներկա էին Վեհափառ Հայրապետն ու Մայր Աթոռի ողջ պաշտոնեությունը: Հավարտ ժամերգության վանքի ողջ աշխատակազմը համախմբվեց Վեհարանի հանդիսասրահում՝ լսելու Վեհափառ Հայրապետի պատգամները:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

«Վեհափառ Տեր,

Մեծահարգ նախագահ Եկեղեցական խորհուրդի՝ տիար Ստեփան Վարդանյան,

Սիրելի ներկաներ,

Այսօր Մայր Աթոռիս համար հիշարժան օր է. Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողության, բոլոր աշխատողների և ծառայողների համախմբումի օր: Համախմբվել ենք, որպեսզի Մայր Աթոռի յուրաքանչյուր աշխատող մի անգամ ևս կրկնի իր խոստումը, որ որովհետև առավել նվիրվածությամբ, պատրաստակամությամբ և հավատարմությամբ պիտի աշխատի և իր համեստ ծառայությունը պիտի բերի Մայր Աթոռի առավել պայծառացման ու բարգավաճման՝ հուրախություն համայն հայ հավատացյալ ժողովրդի:

Այս ուրախ առիթով, Վեհափառ Հայրապետի սիրալիր հրավերով ներկա են մեր մեջ Արարատյան, Շիրակի, Ադրբեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի թեմակալ առաջնորդները, թեմերի քահանա հայրեր և թեմական ու եկեղեցական վարչությանց հարգարժան անդամները:

Այսօր, երեկոյան, մենք բոլորս ներկա եղանք հոգեպարար «Հանգստյան» ժամերգության: Մեկ անգամ ևս մեր հոգիները լցվեցին Ս. Ներսես Շնորհալու հոգեվմայլ շարականներով, Ս. Գրիգոր Նարեկացու մաքրափայլ աղոթքներով:

Բոլոր աղոթքներում խաղաղություն հայցեցինք Բարձրյալից: Հիշում եք բոլորդ, որ անցյալ տարի մեծ հանդիսավորությամբ տոնվեցին երեք տարեթվեր: Առաջինը Մեծ եղեռնի 70-ամյակն էր. ս. պատարագ և խունկ մատուցվեց երկու միլիոն անմեղ զոհերի հիշատակին: 1915 թ. հայ ժողովուրդը երկու միլիոն նահատակներ տվեց և միայն Սարդարապատի հաղթանակով չկրկնվեց երկրորդ եղեռնը՝ Արևելյան Հայաստանում, իսկ 1920 թ. նոյեմբերի 29-ի լուսաբացին, ռուս եղբայր ժողովուրդի օգնությամբ ծնվեց հայոց նոր մանուկը՝ Խորհրդային Հայաստանը, որ արդեն 65 տարիներ ընթանում է վերելքի ուղիով:

Երկրորդ հիշարժան տարեթիվը եղավ սովետական ժողովուրդների՝ ֆաշիստական Գերմանիո դեմ տարած փայլուն հաղթանակի 40-ամյակը: Մայիսի 5-ին, Երևման խաչի տոնի օրը, ս. պատարագ մատուցվեց և ընթերցվեց Վեհափառ Հայրապետի՝ Հաղթանակի 40-ամյակին նվիրված սրբատառ կոնդակը:

Իսկ երրորդ հիշատակելի օրը հանդիսացավ Վեհափառ Հայրապետի գահակալության 30-ամյակը:

Անցյալ տարի աշխատեցինք եռանդով և արդյունավետորեն: Սակայն ավելին անել կարող ենք, և այդ առիթով է, որ հավաքվել ենք այստեղ՝ ունկընդրելու համար Վեհափառ Հայրապետի պատգամները՝ որպես ուղեցույց մեր հետագա գործունեության»:

Ապա խոսքը տրվեց Վեհափառ Հայրապետին

«Սիրելիներ,

Գարուն է արդեն, և գարնանային շունչը տարածվում է ամեն կողմ: Երկինքը պայծառանում է, արևը ավելի շերմանում, բնությունը զարթնում: Այսօր մեր Արարատն էլ իր սքանչելի դեմքը լրիվ բաց է արել: Վերանորոգման, վերածնունդի ավետիսն է, որ շեփորվում է ամենուրեք: Եվ մարդկանց հոգիների մեջ անդրադառնում է այս իրողությունը, այս գարնանային շունչը, ինչպես ձեզանից ամեն մեկը զգում է այդ: Հատկապես գարնան, այս վերածունդի օրերին, մենք էլ իբրև մարդիկ զգում ենք ինչ-որ վերանորոգում մեր մարմնի և հոգու մեջ: Մեր կարծածից ավելի մեծ չափով մարդը կապված է բնության հետ և ոչ միայն մեր անմիջական շրջապատի, այլ նաև հեռուների հետ, տիեզերքի հետ: Գիտնականները հետզհետե հայտնաբերում են իրողություններ, որոնք խոսում են այդ մասին, թե ինչքան ենթակա է մեր երկրագունդը ուրիշ երկնային մարմինների ճառագայթումներին, մագնիսական հոսանքներին, տիեզերական ձգողության և այլն, և այլն: Ահավասիկ, ինչպես մարդ էակը իրապես կապված է և՛ իր մարմնով, իր մարմնի բոլոր բջիջներով, և՛ իր հոգով մանավանդ, համայն տիեզերքի հետ:

Այս գարնանային օրերին մի վերանորոգման շունչ փչում է և հետզհետե տարածվում նաև մեր սովետական մեծ երկրում: Մի սկզբնավորում նոր կյանքի զարթոնքի ու վերանորոգման, որը ներբողվում է Սովետական Միության ամենաբարձր մակարդակի վրա կանգնած ղեկավարների քարոզչությամբ: Եվ դա, կարծում եմ, բոլոր սովետական հանրապետությունների քաղաքացիներին ուրախացնում է, որովհետև խոսքը վերաբերում է վերանորոգման, խոսքը վերաբերում է թերությունների վերացման և աշխատանքի կարգապահության ընկերային և տնտեսական կյանքում, խոսքը վերաբերում է լավատեսության դեպի մեր երկրի ավելի պայծառ ապագան: Ու այդ գարնանային շունչի մեջ կենտրոնական տեղ է գրավում ավելի խաղաղ, համերաշխ մի աշխարհ ստեղծելու տենչը: Ահա այսքան հիմնական տվյալներ որոնք չեն կարող մեկ անտարբեր թողուլ: Ճիշտ է, Եկեղեցին բաժանված է պետական

կառույցից, բայց մենք նույն երկրի քաղաքացիներն ենք, և մեր կյանքը, մեր ճակատագիրը ամբողջապես կապված է մեր հայրենիքի կյանքի ու ճակատագրի հետ: Ահա թե ինչու այդ պատգամները ոչ միայն մեզ հետաքրքրում են, ոչ միայն մեզ ներշնչում են առավել լավատեսություն դեպի մեր ապագան, այլ նաև թելադրում են մեզ օրինակ վերցնել և մեր հոգևոր-եկեղեցական կյանքում հետևել նույն ցուցումներին և թելադրանքներին, որովհետև դա ևս նպատակ եմ օգտակար մեզ համար, որովհետև մենք էլ, մեր վանքն էլ ոչ միայն զուտ կրոնական, այլ նաև վարչական-տնտեսական մի հիմնարկ է: Հետևաբար, ինչ որ այնքան ոգևորությամբ և հայրենասիրական տենդով քարոզվում է ամենաբարձր մակարդակներից, մեզ համար էլ հանդիսանում են ուղեցույցներ իբրև վարչա-տնտեսական, ֆինանսական և շինարարական կազմակերպություն:

Ես գիտեմ, որ մեր բոլոր միաբանները, բաժնի վարիչները, պատասխանատու ղեկավարները Մայր Աթոռից ներս ապնվորեն են աշխատում: Կարող եմ վկայել, որ նրանք ապրում են իրենց արդար աշխատավարձով և ապնվորեն: Սակայն փոքրիկ բացթողումներ լինում են երբեմն: Մեր աշխատողներից ոմանք ուշացումով են գալիս աշխատանքի կամ գալիս են բայց մեկ-երկու ժամ հետո թողնում-գնում՝ առանց համաձայնեցնելու, առանց բավարար պատճառի: Կամ երբեմն փոքրիկ ընդհարումներ են տեղի ունենում, աշխատանքի ընթացքում մեկը մյուսին վիրավորելու, ծանր խոսքեր ասելու դեպքեր, թերություններ որոնք պետք է վերացվեն:

Ուրիշ հարց ևս ուզում եմ շոշափել ձեր ներկայության: Հոկտեմբերի օրերին Մոսկվայում տեղի ունեցան բազմաթիվ հարցազրույցներ՝ արտասահմանյան հյուրերի և թղթակիցների մասնակցությամբ: Բազում հարցեր: Դուք երևի հետևեցիք քիչ-շատ հեռուստացույցից: Մի հարցազրույց էլ տեղի ունեցավ՝ Սովետական Միության մեջ կրոնական կյանքի վերաբերյալ: Հարցազրույցը վարեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հայտնի բարձրաստիճան հոգևորականներից մեկը և շատ խելացի, շատ հստակ և համարձակ կերպով ցույց տվեց իրական դրվածքը եկեղեցական, կրոնական կյանքը Սովետական Միության մեջ: Դա անհրաժեշտ էր երևի, որովհետև Արևմուտքում երբեմն անճիշտ տեղեկություններ են հաղորդվում մեր երկրում կրոնական կյանքի վերաբերյալ: Ես այս առիթով ուզում եմ կարդալ իմ մեկ պատասխանը (նայել «Արարատ» օրաթերթի հարցազրույցը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ», «Էջմիածին» ամսագիր, 1985 թ., էջ 99—103) անցյալ տարի տեղի ունեցած մի հարցազրույցի առիթով, այստեղ, Էջմիածնում: Իմ պատասխանն էր. «Մեր հայ երկրի մեջ Եկեղեցի-պետություն հարաբերությունները շատոնց ի վեր հստակ են, թե՛ իրավական և թե՛ իրողական առումով: Իմ երեսուն տարիների պաշտոնավարության շրջանին ես գոհունակ սրտով հաստատում եմ այս իրավիճակը, և շնորհիվ այս իրավիճակի Մայր Աթոռս հաջողած է կյանքի կոչել այն իրագործումները, որոնք ծանոթ են մեր ժողովրդին, Հայաստանում և արտասահմանում, ամեն տեղ: Ոմանք ինչ-որ սխալ հասկացողությամբ մտահոգվում են այն իրողությամբ, թե մեր երկրի մեջ ապատ են մարդիկ հավատացյալ չըլլալու, ինչպես ուրիշներ ապատ են հավատացյալ ըլլալու և եկեղեցի հաճախելու: Այդ մտահոգությունը արդյունք է նեղմտության և չի համապատասխաներ իրական կացության: Հավատացյալ և ոչ հավատացյալ քաղաքացիներ Հայաստանի մեջ կապրին համերաշխ: Ամեն մեկը հարգելով մյուսի համոզումները: Դա արդեն բացարձակ ճշմարտություն է, ինչ որ ասում եմ, մեր երկրում այսօր, իսկ պետությունը տարբերություն չի դներ իր երկրի քա-

ղաքացիներն միջև այդ տեսակետեն, որովհետև հայրենաբնակ մեր հավատացյալները հավատարիմ քաղաքացիներն են հայրենիքի և նույն եռանդով կմասնակցին երկրի շինարար վարգացմանը: Հավատացյալներ և ոչ հավատացյալներ միևնույն Աստուծո որդիներն են և հեռու մի օր վերջին դատաստանին անոնք՝ հավատացյալներ և ոչ հավատացյալներ երկրի վրա, նժարի վրա պիտի դրվեն համաձայն երկրի վրա իրենց առաքինի և հանրօգուտ իրագործումներու»: Ահավասիկ իմ պատասխանը, որ կարծում եմ ճշգրիտ կերպով իրականությանը համապատասխանում է: Երբեմն ես նկատում եմ, որ մեկանից ոմանք ինչ-որ դժգոհ են մնում, որ Հայաստանում կան նաև ոչ հավատացյալներ: Անշուշտ դա սխալ վերաբերմունք է և ոչ արդար: Մենք ոչ ոքի իրավունք չունենք պարտադրելու մեր հավատքը, ինչպես ուրիշներ իրավունք չունեն պարտադրելու մեզ, որ մենք հավատքից հրաժարվենք: Բարեբախտաբար այդպիսի պարտադրանքի տակ չենք մենք երբեք այստեղ: Ոչ ոք մեր հոգևոր կյանքին չի խանգարում կամ չի վիրավորում որևէ ձևով: Կան նաև ոմանք, որ կարծում են, թե անհավատությունը՝ աթեիզմը, ինչ-որ նոր երևույթ է: Սա ճիշտ չէ անշուշտ: Չեք կարող գտնել որևէ պատմական շրջան, երբ բոլոր մարդիկ հավասարապես հավատացյալ եղած լինեին: Անհավատությունը և հավատքը, կարող եմ ասել, զուգահեռ վարգացած են պատմության ընթացքին՝ սկզբից մինչև մեր օրերը: Հայտնի իրողություն է, որ հելլենական, հռոմեական քաղաքակրթության շրջանից, անհավատությունը ծանոթ իրողություն էր: Այսպես, օրինակ, հելլեն փիլիսոփաները, գրեթե բոլորը հավատքի դիրքերի վրա չէին գտնվում: Ապացույց, որ Բ—Գ դարերի քրիստոնյա հեղինակներ, չափազանց խիստ, երբեմն նախատական խոսքերով մեղադրում էին և դատապարտում հելլեն և լատին փիլիսոփաներին և բանաստեղծներին և գրողներին: Միայն մեկ հելլեն փիլիսոփայի նկատվում էին ընդունելի՝ Պղատոնին: Ոչ իսկ Արիստոտելին: Միայն շատ ուշ, քանի հարյուր տարիներ հետո, միջին դարերում, սխոլաստիկայի շրջանում, կաթոլիկ Եկեղեցին կարողացավ Արիստոտելի ուսմունքին որոշ ձևակերպումներ տալ, որ օգտակար նկատվին քրիստոնեության համար:

Ինչպես քիչ առաջ ես նշեցի, այս գարնան հետ մեր ապրումների մեջ վերստին կենտրոնական տեղ գրավեց աշխարհի խաղաղությունը պահպանելու գաղափարը, հրամայականը: Եթե Քրիստոսի Ավետարանից դուրս հանենք եղբայրսիրության և խաղաղության գաղափարները, տակը շատ քիչ բան կմնա: Հիսուսի Ավետարանը մի փրկագործ կոչ է, մի պատգամ բոլոր մարդկանց ուղղված, մարդասիրության և խաղաղության: Այնքան հզոր է այդ միտքը Ավետարանի և առաքյալների մտածողության մեջ, որ նույնիսկ աստվածսիրությունը պայմանավորում են մարդասիրությամբ:

Առաքյալներից Հովհաննեսը պատգամում է. «Եթե մեկն ասի, թե սիրում եմ Աստուծուն, բայց ատի իր եղբորը, սուտ է խոսում. ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստուծուն, որին չի տեսել» (Ա Հովհ. Դ 20): Սա հարապատորեն քրիստոնեական մի մտածողություն է:

Ես ուզում եմ ձեզ անկեղծորեն ասել, որ խաղաղության հրամայականը ինձ համար հարց է թե՛ իբրև կաթողիկոսի և թե՛ իբրև հայ մարդու:

Այս վերջին հազար տարիների ընթացքում պատմական Հայաստանի հողի վրա հայ ժողովուրդը վաթսուն տարիների խաղաղ շրջան երբեք չէ ունեցած: Հետևաբար ինչպես չգնահատենք խաղաղ գոյավիճակը մեր այսօրվա հայրենիքի:

Վերջացնում եմ իմ այս կրույցը՝ ձեզ կարդալով իմ մեկ խոսքը վերջերս շարադրված խաղաղության շարժման մի ժողովի առթիվ, որ պետք է տեղի ունենա Մոսկվայում:

«Ես գալիս եմ Հայաստանից ուրախ սրտով մասնակցելու Ձեր այս համաժողովին և բերելու Մեր եղբայրական սիրո ողջույնը Հայ Առաքելական Եկեղեցու պատմական կենտրոն Սուրբ Էջմիածնից, որ մեր օրերին կենտրոնն է նաև խաղաղասիրական շարժման հայ հավատացյալ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, ուր ապրում են շուրջ երկու միլիոն Հայ Եկեղեցու կավակներ Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև:

Արտասահմանում բնակվող հայերը հաջորդներն են Արևմտյան Հայաստանի 1915-ի ցեղասպանության վոհ գնացած հայերի, որոնց միջև այսօր թեև գաղափարախոսական տարբերություններ կան, սակայն բոլորը հոգեպես կապված են մնում Սուրբ Էջմիածնին և մանավանդ բոլորը միանում են խաղաղության համամարդկային փրկարար գաղափարի շուրջ:

Ես երջանիկ եմ այս վկայությունները բերելու ձեզ, և հանուն Հայաստանի ու հայ սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի ներկայացնելու ձեզ բոլորիդ հաջողության մաղթանքները ձեր մարդասիրական գաղափարների իրագործման համար:

Հայ ժողովուրդը պատմականորեն խաղաղության ծարավի ժողովուրդ է եղել, որովհետև մանավանդ 11-րդ դարից սկսյալ երբ կորցրեց իր պետականությունը, մինչև 1920 թվականը, գրեթե տևապես եղել է պատերազմների բեմ միշտ հալածված ու նահատակված: Հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրել ու մարտնչել է երազանքովը խաղաղ ու ազատ կյանքի, երազանքովը ազգային և ընկերային արդարության արևածագի:

Այդ երազանքները վերջապես իրականացան Սովետական Հայաստանի Հանրապետության ստեղծմամբ: Նոր պայմաններում, ահա ավելի քան 60 տարիներից ի վեր մեր ժողովուրդը գտավ իր խաղաղությունը և ազատ զարգանալու փրկարար նոր ճանապարհը, սովետական եղբայրական ազգությունների մեծ ընտանիքում:

Ահա թե ինչու, Մենք առաջին սպասավորը Հայ Առաքելական Եկեղեցու, Մեր աղոթքն ենք միացնում մեր քույր Եկեղեցիների աղոթքներին և կոչ անում, որ համերաշխ գործակցությամբը մեծ պետությունների, հատկապես Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների, հիմքերը դրվեն ընդհանուր մի համաձայնության, որով ընդմիշտ ապահովվի խաղաղ գոյակցությունը մեծ ու փոքր պետությունների և իրագործվի աստիճանաբար ընդհանուր զինաթափումը և մանավանդ արգելումը ատոմական զենքերի օգտագործման երկրի վրա ու տիեզերքի տարածքում, ինչ որ հրամայական պահանջն է նաև Միավորված Ազգերի Սան Ֆրանցիսկոյում կնքված ուխտագրի, 1945 թվի հունիսի 26-ին, ֆաշիզմի դեմ տարված մեծ հաղթանակից հետո, որի մեջ հանդիսավոր կերպով հայտարարվում էր ու հաղթող պետությունների կողմից ստորագրվում, թե՝ «ուխտում ենք ցուցաբերել հանդուրժողություն, ապրել խաղաղությամբ մեկս մյուսի հետ բարիդրացիական ոգով, միավորել մեր ուժերը՝ պահպանելու համար միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»:

Ահա իրավական ու բարոյական անժամանցելի սկզբունքները, որով պարտավորված են առաջնորդվելու մեր օրերի պետությանց պատասխանատու բոլոր ղեկավարները:

Այս խոհերով տոգորված, Մեր խոսքը ավարտելուց առաջ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում մեր պետության առաջին ղեկավար Միխայիլ Գորբաչովին, որ այնքան հկոր տրամաբանությամբ և համոզիչ ջերմությամբ մարտնչում է մարդկությանը փրկելու միջուկային պատերազմի աղետից: Նրա անունը պատմության մեջ պիտի մնա արձանագրված՝ որպես կերտիչ՝ համամարդկային ճակատագրի միասնության գիտակցության:

Աստված՝ խաղաղության Աստվածն է, ընդդիմանալ պատերազմին նշանակում է հպատակվել Աստուծո կամքին:

Խաղաղություն ամենեցուն: Ամեն»: